<<ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ>>
ԽՄԲԱԿ
ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՐԿԱՅԻՑ

ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

Հեղինակ՝ Սվետլանա Ավետիսյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

1.ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ----------4-5

2. ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՏԿԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ --
---------- 6-8

3. ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ----------9

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Միտք սերմանի՛ր, ծառ տնկիր

<<Էկոլոգիան>> մի բառ է,որը առաջին անգամ ստեղծել է գերմանացի գիտնական Էրնստ Հերքելը 1866թ.: Էկոլոգիան գիտություն է կենդանի օրգանիզմների և շրջակա միջավայրի փոխհարաբերությունների մասին:Հոմանիշը լինելով շրջակա միջավայր, բնապահպանություն, բնապահպանական գիտությունների, բնության պատմություն բառերին և բառակապակցություններին՝ մեր օրերում էկոլոգիան դարձել է մարդկային գիտություն իր գործնական կիրառություններով՝ կենսաբանության,ջրատարածքների կառավարման, բնական ռեսուրսների կառավարման,քաղաքային նախագծման,համայնքային առողջության,տնտեսագիտության և մարդկանց սոցիալական փոխհարաբերությունների մեջ:

Բնապահպանական գիտելիքները սովորողների կրթական մշակույթի անբաժան մասն են կազմում: Էկոլոգիական դաստիարակության ռազմավարական խնդիրներից է սովորողների մոտ այն գիտակցական ընկալման ձևավորումը, որ բնապահպանական խնդիրների լուծման բանալին իրենց ձեռքում է, որ բնապահպանական խնդիրները լուծելի են, երբ բնապահպանական վարքագիծը կիրառվում է առօրյա կյանքում:

Սույն խմբակի ծրագիրը կազմվել է՝ նպաստելու սովորողների էկոլոգիական համալիր գիտելիքների ձևավորմանը՝ որպես մարդու էկոլոգիական մշակույթի և կենսակերպի բաղադրիչ՝ սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության իրականացումը, էկոլոգիական մշակույթի ձևավորումն իրագործելով «ԲՆԱՊԱՀՊԱԱՆԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ» խմբակի միջոցով՝ սովորողների նախասիրությունների շրջանակներում մեկտեղելով կանաչ հմտությունների և ստեղծագործական մտածողության զարգացումը:

Ծրագրի հիմքում ընկած է բնապահպանական հումանիզմը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սույն խմբակի ծրագրի հիմքում ընկած է սովորողների մոտ «Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքով սահմանված էկոլոգիական կրթության, դաստիարակության և մշակույթի ձևավորումը, ստեղծագործական մտածողության զարգացումը, առօրյայում կիրառելի իրերի ինքնուրույն ստեղծումը:

Բնապահպանական ակումբ խմբակի գործունեության նպատակն է

Ա. Սովորողների կանաչ հմտությունների զարգացումը

- Սովորողների էկոլոգիական գիտելիքների ուսուցմանը, էկոլոգիական դաստիարակության, էկոլոգիական մշակույթի արմատավորմանը, շրջակա միջավայրի պահպանության, բնօգտագործման և էկոլոգիական անվտանգության բնագավառում անձի ճիշտ և խելամիտ կողմնորոշմանը նպաստելը
- կանաչ վարքագծի ձևավորումը
- շրջակա միջավայրի նկատմամբ բարոյագիտակցական, խնայողական վերաբերմունքի ձևավորումը
- էկոլոգիական վարքագծի ձևավորումը առօրյա կյանքում բնության հետ փոխներգործության ընթացքում
- շրջահայաց բնօգտագործմանը, ինչպես նաև մարդու առողջության համար անվտանգ շրջակա բնական միջավայրի ապահովմանը նպաստելը
- անհրաժեշտ էկոլոգիական գիտելիքների և հմտությունների ձևավորումը, որը ծառայում է անվնաս ու սակավաթափոն արտադրության, բնական պաշարների և էներգիայի խնայողության:

Բ. Պատասխանատու և նախաձեռնող քաղաքացու ձևավորումը

Գ. Սովորողների ստեղծագործական մտածողության զարգացումը

Դ. Ձեռքի աշխատանքի արժևորումը

Ծրագրի խնդիրներն են՝

- Ձևավորել բնության նկատմամբ սիրո, հոգատար և խնայողական վերաբերմունք
- Զարգացնել սովորողների կանաչ հմտությունները
- Զարգացնել սովորողների ստեղծագործական մտածողությունը
- Ձևավորել գեղագիտական ճաշակ
- Զարգացնել թափոները տեսակավորելու գիտելիքներ և հմտություններ

- Տարբերակել ստեղծագործական ամենատարբեր, յուրատեսակ աշխատանքների համար առաջին հայացքից ոչ պիտանի տարբեր նյութերի հատկությունները, տեսակավորել՝ ըստ այդ հատկությունների, արժևորել և դրանց հատկություններին համապատասխան օգտագործել, երկրորդ կյանք տալ թափոններին
- Դաստիարակել սեր հայրենի բնության նկատմամբ
- Զարգացնել սովորողների երևակայությունը, պատկերավոր և ստեղծագործական մտածողությունը
- Աշակերտների մեջ ինքնուրույն գեղարվեստական, դեկորատիվ արվեստի արժեքներ ստեղծելու կարողությունների, հմտությունները զարգացնելով՝ պատրաստել դեկորատիվ իրեր՝ կանաչ հմտությունների և նորը ստեղծելու հմտությունների զուգորդմամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Բնապահպանական ակումբ» խմբակը նախատեսված է 5-9րդ դասարանների աշակերտների համար, շաբաթական 2 դասաժամ, տարեկան՝ 68 ժամ:

	Թեմա	ժ/ք
1.	Բնապահպանական կրթության, հիմնական սահմանումը	3
2.	Ինչ էանտառը	1
3.	Ինչպես են անտառները հարատևում	2
4.	Ինչպիսին է Հայաստանի անտառների ապագան	2
5.	Շրջակա միջավայրը և նրա բաղադրիչները	3
6.	Բնության վերամշակողները	2
7.	Ջերմոցային էֆեկտ Ա) Ինչ է ջերմոցը Բ)ինչու է ջերմոցում ավելի տաք,քան դրսում Գ)Ինչ է ջերմոցային գազեր	5

8.	Արվեստի բացօթյա դասեր	3
9.	Բզեզի դպրոցը որպես բնության դպրոց բոլորի համար	2
10.	Տեղանքի ընկալում: Շոշափել բնությունը	1
11.	Ջրի զարմանահրաշ վերափոխումները	2
12.	Էկոխուզարկու:Անհետացող ջրի առեղծվածը	2
13.	Անհետացող ջրի առեղծվածը	1
14.	Լոկալ ջրային ռեսուրսներ	2
15.	Քաղցրահամ ջրի պաշարներ	2
16.	Ջրի աղտոտման պատճառները և հետևանքները	2
17.	Աղտոտում ատոմակայանների թափոններով	2
18.	Կղզի՝ թափոններից	2
19.	Բնակավայրի քարտեզագրում	2
20.	Աղբի խնդիր	2
21.	Աղբի առաջացման պատճառները և վնասակար հետևանքները	3
22.	Արդյունավետ հողօգտագործման փորձը քաղաքային և բնակավայրերում	2
23.	Փոփոխություններ Հայաստանի լանդշավտում	2
24.	Հողային պաշարների կորստի պատճառները:Հողի պահպանության	3
25.	Հողերի էրոզիան և պայքարի դրա դեմ	2
26.	Մարդը՝ որպես սննդային շղթայի մաս	2

27	Արալեզ և գամփռը.Հայ ժողովրդի մշակութային և կենսաբանական ժառանգության օրինակ	2
28.	Օրգանական գյուղատնտեսություն	3
29.	Կոմպոստացում	2
30.	Կենսաանվտանգություն և ԳՄՕ-Ն	2
31.	Սննդային,էկոլոգիական և ագրոտեխնիկական ռիսկեր	2

ԾՐԱԳՐԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Սույն խմբակի ծրագիրը կնպաստի գիտելիքների, հմտությունների, արժեքների և դիրքորոշման ձևավորմանը՝ հետևյալ վերջնարդյունքների տեսքով.

Սովորողը կիմանա

✓ ինչ է շրջակա միջավայրը և կտարբերվեն նրա բաղադրիչները

√ինչ կլինի մարդկանց հետ,եթե շրջակա միջավայրի որևէ բաղադրիչ անհետանա

✓ Ինչ են թափոններ

✓Թափոնների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա

✓Ջրի նշանակությունը բնության մեջ և մարդու կյանքում

Սովորողը կկարողանա

- ✓ տեսակավորել և առանձնացված կերպով հավաքել թափոնները
- ✓ տարբերակել թափոնները՝ ըստ հատկությունների և դրանց երկրորդ կյանք տալ
- ✓ համադրելով կանաչ հնտությունները, ստեղծագործական մտածողությունը, ձեռքի աշխատանքը և կիրառելով թափոնները պատրաստել առօրյայում կիրառելի իրեր։

Սովորողը կգիտակցի

- ✓ թափոնների վնասակարությունը շրջակա միջավայրի համար
- ✓ իր դերը թափոնների քանակի նվազեցման մեջ
- ✓ առօրյա կյանքում կանաչ հմտությունների, էկո վարքագծի կիրառման անհրաժեշտությունը

Սովորողը հանդես կգա՝

- ❖ որպես շրջակա միջավայրի նկատմամբ հոգատար և խնայողական վերաբերմունք ունեցող ստեղծագործ,ակտիվ, նախաձեռնող քաղաքացի :